13/26 ԱՊՐԻԼ 1904

Ա. ՏԱՐԻ. — ԹԻՒ 43

# ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 ֆր. տարեկան

Հասցէ՝
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk
Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Русе

## ԳԱՂԱՓԱՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

I.

Ժողովրդային բոլոր խաւերում սովորաբար շատ ընդհանրացած է հետեւեալ իմաստալից խօսքը, թէ՝ «վերջ ի վերջոյ ճշմարտութիւնը, արդարութիւնը պիտի յաղթանակէ»։

Կան ճշմարտութիւններ, որոնք որքան մեծ են, որքան հակայ ու դժուարըմբռնելի, հետեւապէս և այնքան ուշանում է նրանց յաղթանակը։

Ի՞նչ է այդ ճշմարտութիւնը։ — Հանրային բարեկեցութեան գաղափարն է, որ դարերից ի վեր յեղյեղւում է, աղմկւում, մարդկութեան ամենամեծ մտածողների միտքը զբաղեցնում, բայց դեռ չի յաղթանակել, դեռ թագաւորում է անարդարութիւնը։

Ազգերի և ընդհանուր մարդկութեան պատմութիւնը ուսումնասիրողի աչքի առաջ արձանացող իրականութիւնը — կարմիր գիծը — որ մարդկային կենցաղի զանազան ժամանակաշրջանը միմեանց օղակելով՝ շղթայաձև հասցրել է ներկայ շրջանին, անհամար փաստերով համոզում է ներկայիս պատմութեան օղակը կազմող նոր սերնդին, թէ՝ ի վաղուց անտի մարդկային հասարակութեան մէջ գոյութիւն է ունեցել անարդարութիւնը. ապացուցանում է որ գոյութիւն է ունեցել ու կայ երկու դասակարգ։

Մարդկութեան մէկ հոծ մասը եղել է արդիւնաբերող, արտադրող, միւս մասը՝ վայելող. մէկ մասը թշուառութեան ու խեղճութեան մէջ տառապող, միւս մասը զւարճութեան ու շռայլութեան մէջ լողացող. մէկ մասը աշխատող, բայց աղքատ, միւս մասը՝ ծոյլ, բայց ձրիակեր. մէկ մասը հազարաւորների, հարիւր հազարաւորների աշխատանքի արդիւնքը բռնի յափշտակելով իր սերունդներով ապահովուած, միւս հարիւր հազարաւորները՝ աշխատող, արդիւնաբերող, բայց անապահով, կարօտ՝ թշուառութեան ու զրկանքների ենթակայ. մէկը տիրող, միւսը տիրապետուող, մէկը սեպհականատէր, հարիւր հազարաւորները՝ սեպհականազուրկ, աստանդական, թափառաշրջիկ՝ անողոք կեանքի բեռան տակ ճնշուած, հիւծուած՝ մահը կեանքից գերադասողներ։ Մի խօսքով թոյլերը ուժեղներին կերակրելու համար՝ տիրողների կողմից հաստատուած անարդարօրէնքների տրամադրութեամբ՝ պարտաւոր անմռունչ տանելու ստրկութեան ծանր լուծը, գոհ մնալու իրենց վիճակից և չբողոքելու տիրող կարգերի դէմ, և, հակառակ պարագայում, եթէ յանդգնեն բողոքել, տիրող իշխանութիւնը օրէնքից ոյժ առնելով՝ որպէս օրինազանցների՝ մտրակի, սրի հարուածներով կամ բանտի, աքսորի ու կախաղանի սպառնալիքով կը հնազանդեցնէ։

Անարդարութիւն գործողներ են եղել հին դարերի իշխողները, անարդարութեան զոհերն են եղել անցեալ դարերի թոյլերը։

Ուժեղ մարդը՝ թոյլ մարդի գազան, տկար մարդը՝ մարդ գազանի կերակուր. այս քստմնելի տեսարանն է ներկայացնում հայելին պատմութեան, նոյն անարդարութեան շարունակութիւնն է՝ վիճակը մարդկութեան։

Պատմագիրները անցեալ դարերի՝ անցած գնացած, ապրած, մեռած ու թաղուած մարդկութեան ցաւատանջ պատմութիւնը նկարագրելիս՝ տալիս են ժամանակակից մտածողների անուններ, մտածողներ, որոնք, մարդկային կենցաղի, ընկերական յարաբերութիւնների մէջ բարեփոխութիւններ ներմուծելու, տանջւողների վիճակը կարելի եղածին չափ բարելաւելու համար, քաղաքական օրէնքներ են գծել և կիրառութեան մէջ դրել։ Ոմանք էլ մտածողներից բարոյախօսութիւնն են միջոց ընտրել։ Նրանք ժամանակի տգիտութենից, խաւարից առաջացած և ընդհանրացած նախապաշարումներից օգտւելով՝ կամ դևերի, դժոխքի սարսափով են ուզել սանձահարել մարդ գազաններին, կամ արքայութեան խոստումներով կակղացնել, ի գութ շարժել ուժեղների, ունեւորների սիրտը՝ իրենց ճոխ սեղանների փշրանքներից մաս-բաժին հանելու աղքատներաի համար, այն աղքատների, որոնք նոյն իսկ ունեւորների թշուառ զոհերն են։

Հին դարերի օրէնսդիրները՝ Կոնֆիւկիոս, Մովսէս, Արիստոտէլ, Սոկրատէս, Յիսուս, Մուհամէտ և այլք, զերծ չէին ժամանակի նախապաշարումներից, տիրող կարգերի ժամանակի, միջավայրի և շրջապատողների ազդեցութիւնից, դրա համար էլ իրենց առաջադրած օրէնքները, իրենց բարոյախօսութիւնները մասամբ ապարդիւն անցան, ընկերական յարաբերութիւնների մէջ արմատական փոփոխութիւններ մտցնելուց հեռու մնացին։ Դրանց գործերը, որոնք յաջորդ սերունդների օրէնքների հիմքն են կազմել, որոնք նոր օրէնսդիրների ձեռքին ծառայել են որպէս աղբիւր ընկերական յարաբերութիւնների բարեշրջման, իրենց բովանդակութեամբ ուրիշ բան չեն ներկայացնում, բայց եթէ հակասութեան քաոս. և աշխարհի մեծ օրէնսդիրները, րեֆորմիստները և բարոյագէտները իրենց նախորդների ազդեցութիւնը կրելով ամեն դարու մէջ՝ գրել են այնպիսի օրէնքներ, որ միշտ տկարը մնայ իր ստրկութեան մէջը, ուժեղը ունենայ իշխելու, տիրելու բացառիկ իրաւունքներ։ «Տո՛ւր կայսրին՝ կայսրին եւ Աստուծոյն Աստուծոյ». ահա դասակարգային գոյութեան հիմքը կազմող օրէնքը, որ պարտաւորիչ դարձրեց քրիստոնէութիւնը։ «Ծառանե՛ր, հնազանդ եղէ՛ք ձեր տէրերին». ահա ստրկութեան անհրաժեշտութեան հրամանը. իսկ «դուք եղբայրներ էք» կամ «եթէ կարող էք ազատ լինել, այն ընտրեցէք» հակասութիւններ են, որոնք ոչ մի կերպով չեն հաշտւել առաջիններին և ոչ իսկ իշխողների շահերի հետ։

Արիստոտէլը դասակարգերի գոյութիւնը անհրաժեշտ էր համարում, հիմնւելով բնութեան օրէնքների վրայ և սահմանում՝ ուժեղի տկարի վրայ իշխելու իրաւունք ունենալը։

Գրեթէ նոյն վարդապետութիւնը, նոյն պայմանը ընդունել է դարուս ամենամեծ մտածող Հերբերտ Սպէնսերը — անգլիացի նշանաւոր ընկերաբան գիտնականը։

Աննշան բացառութեամբ այս վարդապետութիւնը մեծ մարդկանց, նշանաւոր և աննշան ընկերաբանների դաւանանքի յենակէտը, միջուկը կամ առանցքն է կազմել, որի վրայ հիմնել են ընկերական օրէնքների անիւի շառաւիղները մինչև մեր օրերը, առանց ուշադրութիւն դարձնելու չարչարւող մարդկութեան աղաղակներին...։

Սակայն անցնող դարում ծնւեցաւ մէկը, որ մարդկային ընկերութեան թշուառութեան պատճառները իր խորին ուսումնասիրութեան առարկան դարձրեց, գիտնականօրէն խուզարկեց ընկերական յարաբերութեան օրէնքները, բազմակողմանի քննեց, ջախջախիչ փաստերով հաստատեց նրանց վնասակարութիւնը, հէնց որոնցից առաջացել է երկու ծայրայեղութիւն. մաթեմատիկական ճշտութեամբ երևան հանեց կապիտալի զարգացման, կենտրոնացման պայմանները, ճշդեց և արդիւնաբերող՝ բայց շահագործւող պրոլետարիատի դերը և, հակառակ ընդունւած կարգերի, օրէնքների՝ մատը դրեց ուղղակի մարդկային թշուառութիւնը սաստկացնող ցաւի, վէրքի վրայ, և այդ դարաւոր ցաւը բուժելու, թշուառութեան պատճառները վերացնելու համար առաջարկեց նրա իսկական դարմանը, այն է՝ հողը, հանքերը, արդիւնաբերութեան գործիքները և այլն պատկանէ համայնքին, արդիւնաբերութիւնը՝ արտադրող աշխատաւորին. ուրիշ խօսքով, մարդկային ընկերութեան բարօրութեան, երջանկութեան հիմքը հաստատւի «մէկը ամենքի համար և ամենքը մէկի» պայմանաւորութեամբ. Ահա

